

ՎԱՀՐԱՄ ԴԱՐՅԱՆ

# ԴԵՊԻ ԵԼԲՐՈՒՄ

ՊԵՏԼՐՍ

1938

ՅԵՐԵՎԱՆ

796.5

17-27

25 OCT 2010

7965

ՎԱՀՐԱՄ ԴԱՐՅԱՆ

Դ-27 նյ.

Դ Ե Պ Ի Ե Լ Բ Ր Ո Ւ Ս

ՊԵՏԶՐՍՏ

1938

ՅԵՐԵՎԱՆ

29 MAR 2013

ՈՎ ՁԻ ՇՓՈԹՎՈՒՄ ԶՅՈՒՆԱՊԱՏ  
ԼԵՌՆԵՐՈՒՄ,  
ՆԱ ՁԻ ՅԵՐԿՆՁԻ ՆԱՅԵՎ,  
ՄԱՐՏՈՒՄ:



3656  
38

## ԿՈՎԿԱՍԻ ԶՅՈՒՆԱՊԱՏ ՆՍԿԱՆ

Յեմբուրայի ամենաբարձր կետի՝ Ելբրուսի լեռնային առաջին արշավը 1935 թվականին, մեծ հետաքրքրություն և վոլեոբուլություն առաջ բերեց խորհրդային Հայաստանի յերիտասարդութեան շրջանում: 22 ալպինիստների արշավը դեպի Ելբրուսի ձյունապատ դադաթը հաջող անցավ: Անցյալում մեզ մոտ գալիս էին հեռավոր յեմբուրական յերկրներից՝ հետադոտելու մեր լեռնային բարձունքները, հիանալու մեր լեռնային հովիտների գեղեցկութեամբ և հմայքով: Այսօր մեր յերիտասարդութեանը և աշխատավորութեանը մեծ հոտանքով ձգտում են դեպի Կովկասյան լեռնաշղթայի ձյունապատ դադաթները, Պամիրի լեռնային հսկաները, խորհրդային Հայաստանի անմատչելի լեռնագագաթները: «Ձի կարելի ապրել Կովկասում և չբարձրանալ Ելբրուսի գագաթը», —ասում և ալպինիստ Պուտչերերը: Լեռնային տուրիզմն, անչուչա, տուրիզմի ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Առանձնապէս հետաքրքրութեանը դեպի Կովկասի ձյունապատ հսկան—Ելբրուսը, տարեցտարի ալբելի ու ալբելի հպորանում է: Ելբրուսը կամ



Եւրբուսի սառցյա մակերեսը ձգվում է հսկայական տարածութեամբ, վրը բռնում է մոտ 150 քառ. կիլոմետր:

Այս հսկայական սառցյա չրջապատը բոլոր կողմերից սեղմում է Եւրբուսը և իջնում սողալով ու տեղ-տեղ, մի շարք սառցադաշտերով, կտրատվում է բազմաթիվ ուղղութիւններով:

Եւրբուսն ունի մոտ 77 սառցադաշտ: Հաճախ այդ սառցադաշտերն իջնում են անդամ՝ ձյան սահմանից ցած, անցնելով 3000-3500 մետր բարձունքով:

Ամենացածր սահող սառցադաշտերն են՝ Մեծ Ալպու՝ 2325 մետր, Իրիկ՝ 2552 մետր և Տերսկուլա՝ 2625 մետր բարձրութեամբ:

Առանձին տեխնիկական դժվարութիւնն չլինելու պատճառով, վերելքը դեպի Եւրբուս համեմատաբար ախրան էլ բարդ չէ և մատչելի յետուրիստական խմբերին, սակայն պետք է հիշել, վոր հսկայական բարձրութիւնը և ուժեղ ցուրտը՝ մեծ պահանջներ են առաջադրում յուրաքանչյուր տուրիստի: Եւրբուսը դեռևս քիչ է հետազոտված և բաժանական հետաքրքիր բնադաշտ է ներկայացնում պրոլետարական տուրիստներին հետազոտական աշխատանքների համար:



Առաջին անգամ Եւրբուս է բարձրացել կաբարդի-ճաղի կիլլարը՝ 1829 թվականին: 1868 թվականին արևելյան դադաթն են բարձրացել անգլիացի Ֆրեշֆելդը, Տուկկերը և Մուրը՝ Դեվուսի ուղեկցութեամբ:

1890 թվականին արևմտյան դադաթը բարձրացավ ռադմական տոպոգրաֆ Պաստուխովը: Մինչև Հոկտեմբերյան հեղափոխութիւնը Եւրբուս են այցելել ընդամենը մոտ 20 մանր խմբեր: Քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո պրոլետարական տուրիստական յերիտասարդութեան մեծ հոսանք սկսվեց դեպի Եւրբուս: Սկսվեցին մասսայական վերելքներ: 1926 թվականին բարձրացան 19 վրացի տուրիստ: 1929 թվականին Եւրբուսի դադաթը բարձրացան Անդրկովկասյան հետեակ զարոյցի 17 ուսանող: 1931 թվականին Եւրբուս են բարձրացել ընդամենը 90 մարդ, իսկ 1932 թվականին՝ 29 մարդ:

Միտիայն 1933 թվականին ձեռնարկվեց առաջին մասնադաշտան վերելքը, յերբ միաժամանակ բարձրացան 87 հոգի:

Մյուս մասսայական վերելքը կատարվեց 1935 թ.: Մեկը Պ Տ Ե Ը-ի Միութենական Կենտ. Խորհրդի ալպինիստներ էր, 170 հոգուց բաղկացած, մյուսը՝ Կարարդինո-Բալկարական կոլտնտեսական ալպինիստներ էր՝ 630 հոգուց բաղկացած: Վերելքը սովորաբար սկսվում է հարավից, Բաքսան դետի հովտից: Նկատի ունենալով, վոր մեծ բարձունքները միանգամից չպետք է վերցնել, այդ պատճառով վերելքը կատարվում է կանգառումներով, ակլիմատիզացիայի յենթարկվելու համար (ոգի նստրացմանը սովորելու համար): Այդ նպատակով պրոլետարական տուրիզմի և էքսկուրսիաների ընկերութիւնը կառուցել է բազաներ և ոթկաններ—«Տեղեկեկի»-ի բազան (1780 մետր

ծ.մ.բ.), «Կրուզոզոր Ելբրուսա» բազան (3100 մ. ծ. մ. բ.), ՊՏԵԼ-ի ոթեանը (4200 մ. ծ. մ. բ.), Ժայռերի վրա կառուցված «Տասնմեկերորդ ոթեան»-ը և Սեղլովինայի վրա մի տնակ (5320 մ. ծ. մ. բ.):



Ելբրուս բարձրանալու համար ամենատարածված մարչուտը հետեյալն է.

Տուրիսաները նալչիկից ավտոբուսով դնում են մինչև Տեգեհեկի և ապա խճուղով (մոտ 9 կիլոմետր)՝ մինչև Տերսիոլա: Տերսիոլայից արահետով պետք է գնալ Ազաու հովտից մինչև Կրուզոզոր (2200—2300 մ.) 2-ից—2½ ժամ տեղությամբ, յերկրորդը՝ Կրուզոզորից մինչև Տասնմեկերորդ ոթեանը (4200 մ.), անցումը տևում է 5—7 ժամ: Յերրորդ՝ Տասնմեկերորդ ոթեանից դեպի Պասաուխովի ոթեանը և Սեղլովինա (5,300 մ.), վորտեղից արդեն սկսվում է վերելքը դեպի գագաթները:



Առաջին անգամ պատմության մեջ 1935 թվին Ելբրուսի գագաթին հեռախոս դրվեց: Ալպինիստներն այլևս չեն չեղլի խեղճան ճանապարհից:

Հեռախոսի սյուները ցույց են տալիս ուղին դեպի գագաթը: Հեռախոսի զանգը կանչում է անհրաժեշտ ոգնությունը: Ելբրուսի գագաթին հեռախոս գնելու նախաձեռնությունը պատկանում է կուսակցության

Հարարդինո-Բալկարիայի մարզկոմի քարտուղար Ընկ. Բետով Կալմիկովին:

Ննդիրն այնքան էլ հեշտ չէր, բայց շուտափույթ կերպով լուծվեց: Մարդիկ աշխատում էին հերոսաբար: Բքի, ձյան, մառախուղի և սառնամանիքների պայմաններում մանուշյորների բրիգադը մի քանի անգամ բարձրանում էր գագաթը, հաճախ իր կյանքի գնով: Այնտեղ, վորտեղ հնարավոր չէր սյուները գրաստով փոխադրել, իրենց ուսերի վրա էյին կրում հերոս կառուցողները և առանց կանգ առնելու տանում էյին բարձր ու բարձր:

Կրուզոզոր տուրիստական բազայից մինչև Պասաուխովի ոթեանը սյուները տնկված են սառցի մեջ, ձյունադաշտերում: Այնտեղ, վորտեղ ձյունը հալվում էր, հեռախոսալարերը միացվում էյին սառուցներին:

Պասաուխով ոթեանից բարձր՝ մինչև Թամբարդը, սառուցը ծակել են գայլիկոնով և սյուները թաղել սառցի մեջ: Այդ ծանր աշխատանքի մեջ հսկայական ոգնություն են ցույց տվել կարարդինացի կուլտուրտեսականները:

Ելբրուսի ստորոտից մինչև գագաթը նրանք անցել են 168 կմ քանապարհ, կանգնեցրել են մինչև 200 սյուն, կառուցել են 110 կմ զիծ, կապել են 280 կմ հեռախոսալար, սարքավորել յերկու հեռախոսային կայան՝ մեկը՝ Բաքսանի կիրճում, իսկ մյուսը՝ Ելբրուսի ստորոտին, 15 հեռախոս միացրել են գագաթի շուրջը ցրված ալպինիստական ճամբարները:

Հուլիսի 21-ին նրանք ընկ. Կալմիկովի հետ բարձ-  
րացել են Ելբրուսի արևելյան գագաթը և այնտեղից՝  
5595 մետր բարձրությունից Բեռալ Կալմիկովը հեռա-  
խոսով վողջույն է ուղարկել Խորհրդային Միության  
ժողովուրդների սիրելի առաջնորդ Ֆեծ ՄՏԱԼԻՆԻՆ:

## 1. ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

... Յերբ մեզ հայտնեցին մեկնելու ժամը, մենք  
անդուստղ հրճվանքով իրար ձեռք սեղմեցինք:

Յերեկոյեր:

Աշնանային դուրեկան զով քամին, թեթևակի սա-  
հելով տանիքներից, զգվում եր մեզ հրաժեշտի անհուն  
քաղցրությամբ:

1935 թ. սեպտեմբերի 8-ի գիշերն արագությամբ  
թանձրանում եր: Կառամատույցի մոտ եր մարդատար  
№ 59 գնացքը: Սպանիչ անփութությամբ դանդաղում  
էյին ժամացույցի սլաքները:

— Ժամացույցն այսոր կարծես դանդաղ է աշ-  
խատում... Դառնությամբ յերեսը չըջելով ժամացույ-  
ցից՝ չճշաց մեր կենսութախ ու հրաշալի «Պեպոն»:  
Յես հետո ել, ամենածանր ժամերին անդամ, չտեսա  
մեր «Պեպոյին» — այնքան տխուր և մտածկոտ դրու-  
թյամբ: Նա չարունակ ծխում եր և յետ ու առաջ դը-  
նում: Իսկ ժամացույցը... Այդ «անպիտան արարա-  
ծը», կարծես ավելի յեր դանդաղում... Այդ յերեկո  
յես նրան ներել չկարողացա:

Վերջապես մենք, քսաներկու ընկերներ, յերիտա-  
սարդ արպինիտներ, գնացք բարձրացանք:

Գնում ելինք Նյբրուս՝ հավերժական ձյան ու սառ-  
ցի չքնաղ մոնումենտի 5633 մետր բարձրությունը  
նվաճելու:


Յերբ ալժամ յես հիշում եմ այն օրը, սիրտս լցվում  
է այն այրող ցանկությունով ու անօրինակ ուրախու-  
թյամբ, վորը համակել էր մեզ մեկնելու պահին. չե՞  
վոր մեզանից և վոչ մեկը, բացի Արագածի դադաթնե-  
րից, մի ալ դադաթ դեռ չէր բարձրացել: Յեվ հիմա  
գնում ենք Կովկասի և Յեվրոպայի ամենաբարձր գա-  
դաթը, հազարավոր ալպինիստների հիացմունքի առար-  
կան՝ Նյբրուսը:

Յեվ ահա մեկը մյուսի հետևից, հեռագրական  
սյուների նման, զնացքի պատուհանների առաջից, դե-  
պի յետ են փախչում կայանները՝ կրճատելով ժամա-  
նակն ու տարածությունը:

Խրտնած հոտերի նման, հրելով իրար, անհուն  
տարածության մեջ դեպի արևմուտք ելին արշավում  
ամպերի քուլաները: Խճուղիները լայն ժապավենները  
փախչում ելին սրընթաց վազքով դեպի յերկրի հեռու-  
ները: Մենք վաղուց մեր հետեվումն ելինք թողել  
Անգրկովկասյան լեռների պարը:

## 2. ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Կաբարդինա-Բալկարիա. — ալպեյս է կոչվում այն  
հրաշալի յերկիրը, վորի «ստեղծագործություն» մեջ  
չափալանց չափլ է յեղել բնությունը: Մտնում ենք  
Նալչիկ: Դեռ հեռվից, արցունքի նման վճիռ լեռների



Նկ 2. Նյբրուսի մարզը

չուրջպարը շոյելով մեր ակունքին և հասնում կաբար-  
դինական դուստնի մեղմ ու հեքիաթային, հովվական  
չվու դյուլթու ձայնը:

Նեղ ու սեղմված ժայռերի վրա, կապարով լեցուն  
պարկերի նման կախված ամպերի հուժկու շառաչից  
հետո, վորպես մի կանչ, վորպես անողնական վշտի  
մի գառն Վակիժ, դարեր շարունակ, քամու հոսանքին  
ունկնդրելով, վորբացել և այստեղ հովվական չվին:

Հին և այդ չվին: Նա յեկեկ և այստեղ կաբարդի-  
նական ժողովրդի հետ մեկտեղ: Նա յերկար ժամանակ  
վաղբացել և իր յերկրի ավերումն ու իր ժողովրդի  
անլուր տանջանքները գոռոզ ու բռնակալ իշխանների  
կրունկների տակ: Իմպերիալիստական անկուշտ վոհ-  
մակները վառողի հոտով ու մահաբեր գնդակներով  
յերկար ժամանակ լռեցրել են կաբարդինական այդ  
կախարդիչ չվին:

Ավանդություն կա սակայն այս վեհ լեռներում,  
և նա պատմում և.

«Այբել և այստեղ մի դոռոզ իշխան, անունը՝  
Կաբարդե:

Նա հարկատու յեր մի նեռ սուլթանի: Յեկ այս  
Կաբարդեն մի որ այցի յե դնում սուլթանին. սպիտակ  
ու սև գաղանի մորթուց մի չքեղ մուշտակ ուներ նա  
հագին:

— Մուշտակդ լավն և, իշխան Կաբարդե, սուլթանա-  
վայել այդ մեծ նվեր և, թե զոհարերես,—այսպես ևր  
տեսել սուլթանը նրան, և Կաբարդեն խոստացել ևր  
տալ:

Յեկ յեղավ մի որ, վոր սուլթանը հրճվում ևր  
անդուստ խնջույքով մոլի, յեկավ մի աշուղ և հանձ-  
նեց նվերը Կաբարդեյի: Շքեղ ու գեղեցիկ ևր մուշտա-  
կը, բայց պատրաստված ևր վոչ թե սև-սպիտակ  
գաղանի մորթուց, այլ խողի մորթուց: Սուլթանը  
ցնցվեց, այլ և կատաղեց ու հենց այդ գիշեր դու-  
ռանն արատավորեց: Յերբ լուրը հասավ Կաբարդե իշ-  
խանին, վախեցավ սուլթանական վրեժից և փախավ  
դեպի Կիդրուրուն լեռը, վորտեղ և հիմք դրեց մի բնա-  
կատեղի, և այն կոչվեց Կաբարդինա՝ իշխան Կաբար-  
դեյի անունով:

Յերբ յես մոտեցա Նալչիկի յերգչին, նա նվագում  
ևր այս լեզենդի մասին և յերբեմն ընդհատելով նվա-  
զը՝ յերգում ևր այսպես.

«Վե'ր կաց, Կաբարդե', մտիկ արա', տես',

թե ի'նչ և դարձել կյանքը մեր հիմա,

Դուք բշել եք մեզ գրաստների պես,

Հոտերի նման լյառը Սիմամա.

Պատել եք՝ ինչպես սայլի հասարակ մի ակ,

Ու տասնյակներով փոխել շան հետ մի բարակ,

Մեզի սվին առանք ու տերը դարձանք

մեր աշխատանքի,

Մեմք եմք նոր իշխան, կառուցող բանվոր, տեր

մեր աշխարհի,

Ձեր դաժան ուղին, իշխա'ն Կաբարդե,

Հավիտյան ու հար անիծյալ լինի»:

Այս մի անմոռանալի հանդիպում ևր ինձ համար:

Առավոտ էր, Կարաբղինո-Բալկարյան առավոտ:  
Մենք դուրս յեկանք Նալչիկից դեպի Տեղենեկլի:



Նկ. 3. Նալչիկ. Կարաբղինոսկայա փողոցը

Այստեղից՝ Նալչիկից, լեռների չքնաղ լանջերից  
սկիզբ են առնում արահետների ու կաճանների ան-  
վերջ, անձայր ժապավենները: Իսկ Ազատ Հովտից  
մինչև Կրուգոգորը ալպինիստներին ուղեկցում են  
գրաստների քարափանները: Ջարմանալի համբերատար  
ու խելացի այդ կենդանիները բաղձաթիվ առերիստնե-  
րի համար հաճախ են մատուցել իրենց ծառայու-  
թյունները: Մեզ ուղեկցող գրաստներին ղեկավարում  
էին յերկու կարաբղինցիներ: Նրանք ամբողջ ճանա-  
պարհին ղրուցում էին մեզ հետ, յերբեմն տեղիք տա-  
լով չափ զվարճալի կատակների: Մեր քա-

րավանն անցավ Կրուգոգորը և բռնեց Տասնմեկերորդ  
աթեվանի ուղին: Գնում էինք այդպես: Յեվ հանկարծ  
քավաղանին հեռվից մեզ են հասնում աղմուկի ձայներ,  
ինչ վոր իրարանցում, հայհոյանք: Շտապում ենք:  
Մոտենում ենք քարավանին և իմանում ենք, վոր մեր  
ընկերներից մեկը, խոսք բացելով կարար-  
դինցիների հետ, վիճել է քարավանը տե-  
ղափոխելու գնի մասին: Յերբ մենք մոտեցանք, մեր  
ընկերը բարձրաձայն աղաղակեց.

— Մենք 10 ուսույի չենք տա, թանդ է:

— Չե՞ք տա, յետ ենք դառնում,—սրտասխանում  
են կարաբղինցիները:

— Յե՞տ դառնաք, կրողորենք:

— Բետալ կալմիկովն ասել է մեզ, վոր 10 ուսույուց  
պակաս չվերցնենք, նա գիտե այդ մասին:

Յերբ մենք մտանք Նալչիկ, արդեն առաջին իսկ  
ժամին լսել էինք Բետալի մասին և գիտեյինք նրա  
հրաշալի կյանքը:

Այստեղ, այս հետաքրքրական ուղևորություն-  
ների ժամանակ, կարաբղինցիները, մի ձեռքը ղենլով  
ախանջին, ղիլ ձայնով յերգում են Բետալ Կալ-  
միկովի մասին: Յերգում են այն մարդկանց մասին,  
վսրոնք տարել են կախալալի լեռնային ժողովուրդ-  
ներին իշխանների ու սատրապների դեմ:

Կարաբղինո—Բալկարական ժողովրդական բանա-  
հյուսության մեջ իր արժանավոր և հետաքրքրական  
տեղն ունի Բետալ Կալմիկովը: Յերբ գրաստավարների  
և մեր ընկերների մեջ ծագած վեճը ղաղարեց, կար-

Ճահատակ կարարդէնցին ձեռը դրեց ականջին և հզոր  
ձայնով սկսեց յերգել.

Սիրում եմք մեմք քեզ, Նլրբա՛ւս, մեծ սար,  
Բայց ավելի քեզ, Կալմիկո՛վ Բետալ.  
Դու փառք ես տալիս, շուք մեր յերկրին,  
Նլրբա՛ւս մեծ սար,  
Իսկ դու՝ յերջանկություն ու նշմարիտ խոսք,  
Կալմիկով Բետալ,  
Սիրում եմք քո ճյուղապատ ուղին, Նլրբա՛ւս,  
Մեծ սար,  
Բայց ավելի քո հիասքանչ ուղին,  
Կալմիկով Բետալ:

Յերբ նրա յերգը դադարեց ու առաջ անցանք,  
նա, այդ միջահատակ զրաստավարը, անապատելիորեն  
արտասանեց մեզ աչնքան սիրելի մի անուն՝ Կիրով:  
— Դու տեսե՞լ ես նրան, — զարմացած հարցնում  
եմք յես:

— Այո՛, տեսել եմ:

— Վո՞րտեղ, Մոսկվայո՞ւմ:

— Վո՛չ, այստեղ, այս կերճում, իսկ Մոսկվան  
ձտեսնեմ չուտով, Բետալը մեզ Վտանի: Ասել ե:

Դժբախտաբար ավելին իմանալ չկարողացա,  
զբառտներին անկանոն յերթն ստիպեց զրաստավարին,  
խոսքը կիսատ թողած, հեռանալ ինձնից:

Յերբ կարում ու անցնում եյինք վեհափառ լեռ-  
ների կիրճը, Բաքսանի հովիտը, կարծեք իմ ականջին

էր հասնում բոցաշունչ արիբունի անմահ ձայնը,  
կարծեք յուրաքանչյուր լեռ, կիրճ, յուրաքանչյուր ճյու-  
ղապատ դադարթ բալական ժամանակ արձագանդում  
էր Կիրովի ձայնին, մինչև վոր այդ խոսքերը կենսա-  
դործվեցին:

«... Կովկասի լեռներում վոչ միայն թաղնված  
դեղեցկություն կա:

Լեռնային ժայռերի այդ շղթան հանդիսանալու  
յե հզոր պատենչ, վորին դիպչելով պետք ե փշրվեն  
ոեակցիայի բոլոր ուժերը, և լեռնային այս վայրի  
կիրճերում լսվում ե վոչ միայն քամիների վոռնոցը.  
այնտեղ լսվում ե և դեմոկրատիայի իսկական դավաճ-  
անքի թաղնված հույսերի հեղափոխական յերգը»:

Այսպես ե ասել հեղափոխության բոցաշունչ  
արիբուն Սերգեյ Միլոնովիչ Կիրովը ոեակցիայի դա-  
ժան տարիներին, յերբ լեռնային ազատատենչ ժողո-  
վուրդները հեծում եյին սեփական իշխանների ու  
ռուսական ցարիզմի ճնշման ու շահագործման ծանր  
լծի տակ:

Լեռնային ժողովուրդներին՝ այդ «դեմոկրատիայի  
իսկական զավակների թաղնված հույսերի հեղափո-  
խական յերգն» այսօր վեր ե ածվել սոցիալիզմի հաղ-  
թական շինարարության համաժողովրդական սիմ-  
ֆոնիայի և Կարարդինո — Բալկարիայի «կարախալա»  
ժողովուրդը կերտում ե իր յերջանիկ ու բերկրալի  
կյանքը մեծ կոմունիստական (բոլշևիկների) կուսակ-  
ցության և ժողովուրդների հանճարեղ առաջնորդ  
ընկեր Ստալինի ղեկավարությամբ:

Ու մտածում եմ, թե ինչպես խորը կհրճվե՞ր  
կիրավը, տեսնելով լեռնային աղտոտադրված ժողո-  
վուրդների այս մեծ հաղթանակները ու կարտասանե՞ր  
ալեկի մեծ վողեռուրթյամբ:

«Հաջողություններն իսկապես մեզ մոտ վիթխա-  
բի յեն: Սատանան տանի, մարդկայնորեն առած,  
այնքան ես ուզում ապրել ու ապրել...»:


### 3. ԲԱՔՍԱՆԻ ԿԻՐՃԸ

Գեղեցիկ է Բաքսանի կիրճը: Նալչիկից դեպի  
Ելբրուսի ստորոտը ձգվող 154 կմ յերկարություն  
ունեցող վոլորապտույտ նեղ խճուղով, վորի յերկու  
կողմերից բարձրանում են սրածայր ժայռերը և  
կախվում խճուղու վրա, տեղ-տեղ Բաքսան գետին  
հպելով մեր ավտոն, ճանապարհը դնում է դեպի  
Տեգենեկլի:

Բնությունն առատորեն պարզեւել է իր գեղեց-  
կությունը մեր մեծ յերկրի այս ծայրամասին:

Կիրճի յերկարությամբ ձգվում է Բաքսան գե-  
տակը, վորը հուզվում է մոլեղնում է իր մեջքին  
նստած քարաժայռերի նեղ պատյանի մեջ: Նա Կով-  
կասի համբարձական ձյունապատ դադաթխերից՝ Ել-  
բրուսից, Ուժբայից, հսկա Դիխ-Տաուից ժայթքող  
հեղեղի յե նման, վոր նոր տաքանալով դարնանային  
արևի տակ՝ պոթկում է ձմռան սառույցների ու  
ձյունների տակից և առաջ է սլանում հուժկու,  
փրփրաղեղ, ազատ ու համարձակ:

Իսկ նրա շուրջը տարածվում են կանաչ մարդա-  
շէտինը, Կաբարդինո-Բալկարիայի մի քանի աուլ-  
ներ նոր շենքերով: Հեղհետե կիրճը դառնում է  
ալեկի և ալեկի գեղեցիկ ու հետաքրքիր: Բարձրա-  
նում են ահռելի ժայռերն ու սեպածե բարձր լեռները  
և կախվում մեր գլխին, վերեւում կապույտ յերկինքն



Նկ. 4. Սվանեթիա. հեռվում յերեվում է Ուժբան՝ սրածայր  
դադաթներով

և, իսկ ներքեվում՝ փրփրահույզ Բաքսանը, վոր  
յերբեմն մեր ձախ կողմում է լինում, յերբեմն ել՝ աջ:  
Ճանապարհը սկզբից հարթ է:

Նալչիկ—Պյատիգորսկ խճուղուց 26 կիլոմետրի

վրա, վերին Բաքսանի մոտ ճանապարհը թեքվում է դեպի ձախ, և Կիզրուրուն 3-րդ, Կիզրուրուն 2-րդ, Կիզրուրուն 1-ին ու Ջալուկովա գյուղերի միջով Նալչիկից 40 կիլոմետր անց, հասնում ենք Բաքսան գետի շինարարությունը:

Բաքսանգրետ...

Սա Կարարդինո—Բալկարիայի ելեկտրական սերուն է:

Այստեղ Բաքսան գետի տարերքը սեղմված քետոնի և յերկաթի մեջ, 1936 թվականի սկզբին տասնյակ հազար կիլովատ եներգիտ տվեց յերկրի աշխատավորությանն ու ծաղկող սոցիալիստական արդյունաբերությանը:

Սա Կարարդինո—Բալկարիայի նոր արդյունաբերական գիդանն է:

Ջալուկովա գյուղի մոտ, վորտեղ կատաղութունից փրկրած Բաքսան գետի յերկու կողմում վոլորապտուկտ կտրատվում են ժայռերը, Բաքսանի հովիտն սկսում է աստիճանաբար սեղմվել հոյակապ կիրճի մեջ:

Նալչիկից 70 կիլոմետր հեռավորության վրա, Լաշկուտա գյուղի մոտ, գտնվում է Կարարդինո—Բալկարիայի մսի սովխոզը՝ ցեղային հսկայական տընտեսությամբ:

Լաշկուտա գյուղից դեպի հարավ—արևելք անտառապատ և արոտային լեռնաշղթայի մի ճյուղավորության միջով, անցնում է մի փոքրիկ լեռնարահատ դեպի Չեգեմի կիրճը, դեպի ներքին Չեգեմ գյուղը:

Այս արահետով սովորաբար ոգտվում են լեռնցի-

ները. տուրիստներն այստեղով չեն անցնում: Այս շրջանը քիչ է հետազոտված և մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Ճանապարհը տեղում է 10-12 ժամ: Մսի սովխոզից (պլեմխոզից) մի քիչ բարձր, Շաշրովատ կրճանցքի մոտ, ավտոն սողալով հողաշերտերից պոկված, վայր դրված քարեծածկի տափով, անցնում է նոր փայտյա կամուրջով Բաքսանի աջ ափը և դուրս է գալիս Բիլիմ գյուղի մոտ՝ Սառուլ-Տյուղի հովիտը: Այս իսկական դադստանյան պեյզաժ ունեցող հովիտն ունի մուգ բուսականություն, չոր ու կանաչ խոտ: Սա ամենից չորային, տեղումների չնչին քանակություն ունեցող վայրն է ամբողջ կենտրոնական Կովկասի:

Բիլիմից դեպի հյուսիս—արևմուտք Գիժգիտ կիրճի միջով, վորտեղից պարզ յերևում է Նաուչի-ձեյի գագաթը, անցնում է լեռնային մի փոքրիկ արահետ, վորն անառապատ և արոտային լեռնաշղթայի ճյուղավորությունների միջով տանում է դեպի Կիսլովոդսկ քաղաքը: Այս ճանապարհը չատ քիչ է հայտնի: Այս արահետով ոգտվում են միայն Բաքսանի կիրճի բնակիչները, վորոնք արոտներ և վոչխարառոցներ ունեն Մալկայի և Կիչմալկայի վրա: Այս շրջանը հետազոտված չի և մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Բիլիմից դեպի արևելք Կեստանտի գետի կիրճով մի նեղ լեռնանցք տանում է դեպի Չեգեմի կիրճը, դեպի Ակտուրակ գյուղը: Այստեղ անտառներ չկան, բայց դրա փոխարեն տուրալիսական կանաչավետ

մարդագետիներն ունեն մինչև այժմ անհայտ բազմա-  
թիվ բույսերի հարյուրավոր տեսակներ։

Հետևյալ գյուղը ներքին Բաքսանն է, Բիլվից  
36 կիլոմետր հեռու։ Ներքին Բաքսանից հարևան  
լեռնանցքի միջով անցնում է գեղեցիկ լեռնային  
արահետը դեպի Վերին Չեղեմ գյուղը։

Այս արահետը հայտնի յե Չեղեմում և Ն. Բաք-  
սանում միմիայն մի քանի լեռնային վարորդների։  
Այստեղ վարելի յե անցնել միայն վոտով և ճանա-  
պարհը կտեի 20 ժամ։ Այս չրջանը բոլորովին հետա-  
դադարած չի։

Հետո կերճը դառնում է ավելի ու ավելի հետաքրք-  
րելի։ Ամեն տեղ քմահաճ, տարօրինակ ժայռեր, ապա-  
ռաժներ, վերևում բաց կապույտ, լուրթ յերկինքն է,  
ներքևում չաչում է և փոթորկում կատաղի Բաքսանը։  
Ճանապարհից մի քիչ դուրս հանդիպում ենք Բալիա-  
րական լեռնաբնակների գյուղերը—առուները։ Սրանք  
գորշ քարե խրճիթներ են (հյուղեր), հաճախ ամուր  
կալած յերբեմնի ընկած հակադարձ ժայռերին,  
փորոք հաղիվ են յերևում անսովոր աչքին։

Դուրս պրճներով ամենալերջին և ամենանեղ  
Ելժուրտույի կրճանցքից՝ ճանապարհը դուրս է դալիս  
յայն հովիտը, վորտեղ կանաչ մարդագետիների մեջ  
գտնվում է Վերին Բաքսանը, Բալկարիայի ամենամեծ  
գյուղերից մեկը։ Այստեղ, ուղիղ մեր դիմաց, արեի  
ճառագայթներով վողողված, փայլում է Դոնդուզ—  
Բաչի լեռնային հսկայի ձյունե վիթխարի զանգվածը։

Վ. Բաքսանից ճանապարհը Կիրտնի—առաջ լեռնանց-

քով, Ադիր—Սու կիրճով և Մեստիական լեռնանցքի  
միջով տանում է դեպի Սվանքիա։

Արահետն Ադիր—Սու կիրճով 15 կիլոմետր յեր-  
կարավյամբ մոտենում է Ադիր—Սու—բաչի լեռան  
ուղղակի սառցադաշտերին և դառնում է աննկատելի՝  
մորենների ու սառցադաշտի ճեղքվածքների մեջ։


Վերին Բաքսանից, կիրճի, բալկարական մի շարք  
առուների, գեղատեսիլ հովտի միջով, ծածկված փշա-  
տերև անտառով և չրջապատված ձյունապատ լեռների  
պայծառ դադաթներով, հասնում ենք Տեղեհեկի  
առվը։ Այստեղ է պրկտարական տուրիզմի՝ Ել-  
բուսի և Բաքսանի մարչրուտների ՊՏԵԼ-ի բազան։

#### 4. ՍՈՃԻՆԵՐԻ ՅԵՎ ԺԱՅՈՒՐԻ ՄԵԶ

Բաքսան գետի աջ ափին ընկած են մի քանի  
նորակառույց շենքեր։ Սա Տեղեհեկի առուն է, բալկա-  
րական մի փոքրիկ գյուղ՝ 1780 մետր բարձրությամբ։  
Գետի ձախ ափին, սոճիների անտառի մեջ տեղավոր-  
ված են մի քանի վրաններ և յերկու փայտաչեն տնակ-  
ներ։ Սա տուրիստ—ալպինիստների վերջին կետն է,  
այստեղից է սկսում հեռիտան ճանապարհը դեպի  
Ելբրուս։ Այստեղ են ապրում Սայիդ Ուալայելը և  
Ումար Բիկոյելը, նրանք, փորոք բազմաթիվ ոտա-  
րեկրյա և խորհրդային տուրիստների առաջնորդել են  
դեպի Ելբրուսի դադաթը, իսկ 1935 թվին 600-ից  
ավելի կարարդևո—բալկարական կույտնականների  
առաջնորդեցին դեպի Ելբրուս։

Գեղեցիկ է յերեկոն Տեղեհեկի ճամբարում։ Ճամ-

բարի մեջտեղում ամեն գիշեր վառվում և տուրխատա-  
կան խարույկը, իսկ նրա շուրջը, հատուկ կառուց-  
ված կլոր նստարանները վրա նստած, զրույց են անում  
մեր յերկրի բոլոր ծայրամասերից հավաքված պրո-  
լետարական տուրխատները: Նրանք պատմում են այն  
մարդկանց մասին, վորոնք նահատակվել են Կովկա-  
սյան լեռնաշղթայի, նրա թաղուհու՝ Նլբրուսի բար-



Նկ. 5. Տեղեկեկի տուրխատական բազան

ձուներենում և սառնամանիքներում: Նրանք հիշում են  
հայտնի ալպինիստ՝ ավստրիացի Ֆուխսին, վորը  
յեկավ Նլբրուս բարձրանալու համար և բքի ժամա-  
նակ մի չնչին դեպքից նահատակվեց ու թաղվեց  
Նլբրուսի ստորոտին: Նրանք պատմում են չափազանց  
հետաքրքիր ալպինիստ Զիլհելմի ստորոգինալ մահվան

մասին: Ասում են, վոր նա յերբեք չէր սիրում ընկեր-  
ներով գնալ լեռները, և ահա վերջին անգամ Նլբրուսի  
արևմտյան դաղաթն և գնում... մենակ: Հաջորդ ոբը  
նրան դառնում են դաղաթին՝ քնելու պարկի մեջ վաթ-  
տացած: Նրանք հիշում են Սաչա Գերմադենովին, վոր  
նահատակվեց սրտի պայթումից: Անմոռանալի 'յե  
Պաստուխովի արշավը, նրա՝ վորը 1890 թվականին  
պատասպարվեց դաժան ձյան փոթորկից, լավային քա-  
րաժայռերի մեջ, վորն այժմ կոչվում և իր անունով՝  
«Պաստուխովի ոթեվան»: Խարույկի շուրջը սկսվում և  
յերգն ու պարը, ուրախ տուրխատական յերեկոն:  
Կառչուկչինի մեքենավար Գառնիկը դառնում և բոլորի  
ուշադրության առարկան. նա ամեն յերեկո արտասա-  
նում և և յերգում Պեպոյի յերգը, համախմբում բո-  
լորին իր շուրջը, կադմակերպում կուլտուրական հան-  
դիսար: Կարարդինցին, բալկարացին, ռուսը, ավստ-  
րիկան շուրջուղականները, վրացիները, հրեաները--  
բոլորն ինչպես մի ընտանիք, հասկանում են իրար, ուրա-  
խանում և ծափահարում են ամեն անգամ, յերբ հանդես  
և դալիս մեքենավար Գառնիկը: Նրանք յերգում են խա-  
րույկի շուրջը իրենց հորինած նոր յերգերը՝ Պեպոյի,  
Իբենց սիրելի յերգի յեղանակով:

«Վողջ սարերը ման եմք յեկել,  
Մրագածն եմք մեմք բարձրացել,  
Վա'յ եմ մարդուն, վոր իր կյանքում  
Նլբրուսը չի բարձրանում»:

Ուրում են կոտորված դուշը կողքին, և պտտվում  
և կլոր պարը:

Առանձին ուշադրութեամբ խումբը լսում է չափա-  
զանց աշխույժ, պարզ և անկեղծ կոմյերիտական մեքե-  
նավար Զավենին, վորն իր ժողովրդական յերգերով,  
սրախոսութիւններով նույնպէս դարձել եր բոլորի սիր-  
ելին: Նա յերգում է առանձին հուզմունքով.

— Աղջի՛, յե՛րբ ես գնում մարդի:

— Քա դե՛, յես ի՛մ, յես ի՛մ, յես ի՛մ:

Յերգում է նաև խումբը, ուրախանում ու բարձ-  
րաձայն ծիծաղում:

Այստեղ, այս խարույկի շուրջն իրենց հերոսա-  
կան պայքարի մասին պատմում են ավստրիական  
չուցրոնդականները՝ Ֆրանցը, Գուստավը, Զաուրե-  
րերը և մյուսները, առավոտյան ել մաղցում են քա-  
րաժայռերի ծայրերն ի վեր, այժյամի նման ճարպ-  
կորեն, և ցույց են տալիս հաղարավոր ալպինիստների,  
թե ինչպէս սրեաք և հաղթահարել քարաժայռերը և  
սովորեցնում են ժայռեր մաղցելու տեխնիկան:

Հաջորդ որն առավոտյան մեղ հետ եր վերա  
Շչոլովը: Այդ լեռնային այժյամը, վոր ցույց եր տա-  
լիս հերոսութեան անձնական որինակ ժայռեր բարձ-  
րանալիս, առհալետ անջնջելի կմնա մեր հիշողութեան  
մեջ: Նա առաջինն եր մաղցում սեպածել ժայռերը՝  
պարանն ամուր կապած միջքին և ուսին և ապա մեղ՝  
կովկասցիներէս մեկիկ-մեկիկ բարձրացնում քարա-  
ժայռերով: Այդ լեռնագրագի բանվորուհին իր զուսպ

և մտածված չարժումներով, ժայռերի ծերպերին, մեր  
մեջ ստեղծում եր առաջ գնալու, դժվարութիւնը հաղ-  
թահարելու կամք: Շուցրոնդական Գուստավը մեծ  
առասրտութեամբ իջնում եր սարանով ժայռից ցած  
և ցույց տալիս ժայռից իջնելու Դյուֆլերյան տեխնի-  
կան:

Այստեղից, Տեղենեկլիից 7—8 կիլոմետր հեռավո-  
րութեան վրա, սոճիների գեղեցիկ անտառի միջով  
վրտի մի նեղ ճանապարհ տանում է դեպի Ալբիլ-առ  
կիրճը: Ալպինիստներն այստեղից բարձրանում են  
Շեխելդայի և Բոկոլուխի սառցադաշտերը: Այս չըջանը  
հարուստ է անխաթթվալի բազմաթիւ աղբյուրներով:

Շեխելդա և Ալբիլ-առ գետերի անկման հոսանքի  
մոտ և գտնվում ալպինիստական ճամբարը, վորը բո-  
լորի ուշադրութիւնն է դրնվում իր բնութեան բա-  
ցառիկ գեղեցկութեամբ:

Տեղենեկլիից Յուսենգի կիրճով և Բեչոյի լեռ  
նանցքով ճանապարհը դնում է դեպի Սվանեթիա: Սա  
ամենակարճ ճանապարհն է Բաքսանի կիրճով դեպի  
Վերին Սվանեթիա:

## 5. ԴԵՄԻ ԿՐՈՒԳՈՉՈՐ

Սեպտեմբերյան մի պարզ առավոտ, յերբ արեւի  
առաջին ճառագայթները չոյում էյին սոճիների կա-  
տարները, Վերա Շչոլովը պատրաստ կանգնած եր՝  
մեղ դեպի Երրուտի Կրուգոգորն առաջնորդելու:

Մեր խումբն անցնելով փոքրիկ փայտյա կամուր-  
ջը՝ խճուղով ուղևորվեց դեպի Կրուգոդոր:

Ահա Յուսենգիի գեղեցիկ կերճը:

Այստեղից ե անցնում դեպի Բեչո տանող լեռնանց-  
քի ուղին, ճանապարհը դեպի «Ռոտ-Ֆրոնտ» տու-  
րիստական ճամբարը և Կոյ-Սուրուլգեն արվարձանը:  
Այստեղ յերեացող նոր շենքերը միայնում են նոր Բալ-  
կարիայի յեռուն շինարարության մասին:

Այլ կողմում ընկնում և Տեղենեկլի-Բաշի, Սարի  
Կոլ-Բաշի, իսկ ձախում՝ Կոկուտայ-Բաշի լեռները:

Ազաու-գետնիկ-կարա-բաշի յեռան դիմացը սոճիներ-  
քի անտառի մեջ, Տեղենեկլիից դուրս յեկող ալպի-  
նիստներն առաջին դադարն են անում Նարզանի աղ-  
բյուրների մոտ:

Այստեղ բուռն շինարարություն և կատարվում  
ապագայում խոշոր կուրորտ կազմակերպելու համար,  
ուր կգան բժշկվելու վուկրախտով հիվանդները, իսկ  
այժմ՝ այս փոքրիկ կուրորտն ուղասարկում և միայն  
փոքրաթիվ հիվանդների:

Մեծ են Նարզանի աղբյուրների, այս վայրի կու-  
րուտային նշանակությունը և հեռանկարները:


Իթ-կոլ (բարի, չան թաթ) արվարձանից վերև ան-  
հետանում և Բաքսան գետը:

Ահա այստեղ և, վոր Դոնդուլ-Որունի սառցադաշ-  
տերից սկիզբ և առնում Դոնդուլ-Որուն գետակը,  
Տերսկուլի սառցադաշտից (Ներբուս) Տերսկուլա և Մեծ  
Ազաու սառցադաշտից (Ներբուս)-Ազաու գետակները,  
վորոնք Իթ-կոլի մոտ միանալով՝ կազմում են

փրիրահույզ, ուժեղ սահանքներով հոսող Բաքսան  
գետը:

Այստեղ, Իթ-կոլ դյուղի մոտ, մի փոքրիկ արա-  
հետ տանում և դեպի Դոնդուլ-Որունի լեռնանցքը:

Ճանապարհը մինչև Տերսկուլա դյուղը անցնում  
և սոճիների անտառի միջով:



Նկ. 6. Կոկուտայ Բաշի լեռը. հեռվում՝ Ներբուսի ձյունադա-  
ղապթը Բեչո լեռնանցքից

Տերսկուլա (Բալի. նեղ սկյուռ) դյուղի մոտ իջ-  
նում և գեղեցիկ սառցախույտով Տերսկուլա սառցա-  
դաշտը:

Այստեղ տուրիստները հանգստանում են 15—20  
բույե: Այստեղ և գտնվում Կարմիր բանակի տան, ալ-  
պինիզմի վարժական կայանը, ռազմականացած բաղան:

Արևն սկսում եր թեքվել դեպի մայրամուտ, յերբ մենք նստեցինք հանդստանալու Տերսիոլա գյուղի մոտ, փոքրիկ պուրակում:

Այստեղ սկսվում է վերելքը դեպի Ելլրուտի կրու-  
ցոգորը: Տեղենեկլիից մինչև Կրուզոգոր 16 կիլո-  
մետր է:

Ճանապարհն ամբողջ ժամանակ ձգվում է ան-  
տառի միջով:

Տերսիոլա գյուղի մոտ վերջանում է սայլի ճանա-  
պարհը և սկսվում է լեռնային մի նեղ արահետ, ուր  
առանց վերելքի զգալու՝ աննկատելիորեն հասնում ենք  
մի ալպիական մարգագետին—Ազաու բացատը՝ 2200  
մետր բարձրությամբ:

Տերսիոլա գյուղից մինչև Ազաու բացատը 3 կի-  
լոմետր է և ճանապարհն ամբողջ ժամանակ դնում է  
անտառով:

Տերսիոլայից 20 բուպե քայլելուց հետո մեր ձախ  
կողմում բացվում է անտառային թափուկի մի բացատ,  
վորը հետեվանք է 2 ձյան հյուսերի, վորոնք ընկել են  
Ազաու-Չեղետ-Բաչի լեռան լանջից 1934 թվին:

Այստեղ անհրաժեշտ է նշել նաև մի այլ հանդա-  
մանք, վոր այս անտառապատ հողամասը պոկվել և  
վայր է ընկել վոչ թե լեռան դադաթից պոկված ձյան  
կամ սառցի ուժով, այլ ողի ազդեցությամբ քայքայ-  
ված լինելու պատճառով:

Այս ճանապարհին շատ ընդունակ են կարճահասակ  
կեչիները: Մենք գնում էյինք իրար յետևից, մեկա-  
կան:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրութուն դարձնել

քայլվածքի տեմպի և շնչառության վրա: Անցնելով  
Գարա—Բաչի գետակը, նրա վրա ընկած մեծ քարերի  
վրայով մենք դուրս յեկանք Ազաու բացատը:

Այստեղ կատարեցինք յերկրորդ դադարը՝ 20 բուպե  
տեղում թյամբ, խմեցինք բաղարանայրանը (թանը),  
վորը մեծ հաճույքով ու չնչին վճարով առաջարկում  
է բաղարացիները, վորոնց վոչխարանոցները գտնե-  
վում են Ազաու հովտում, և այնուհետև շարունակե-  
ցինք մեր ճանապարհը դեպի Կրուզոգոր:

Սկսվում է 30 աստիճանի թեքության մի  
վերելք, վորը տևում է 2-3 ժամ: Մինչև Կրուզոգոր  
3 կիլոմետր է: Կրուզոգորն առաջին ոթեկանն է Ել-  
րուտի ձյունապատ լանջին: Այստեղ սկսվում է Տերս-  
իոլա սառցադաշտը, վորը դեղեցիկ սառցակույտով  
լիջնում է դեպի Ազաու հովիտը:

Արևն սկսում է արագ իջնել դեպի Դոնդուզ-Ռ-  
բուն: Նրա ձյունառատ սառցադաշտերը փայլիլին են  
տալիս արեգակի վերջին հաղարավոր ճառագայթների  
տակ: Շառագունել են նաև հարեվան լեռնադաղաթ-  
ները: Սկսվեց առաջին վերելքը:

Կրուզոգոր բարձրանալիս հետզհետե սկսում է ավե-  
լի ու ավելի բացվել մի սքանչելի, հոյակապ տեսարան  
դեպի Կովկասյան լեռնաշղթան:

Յերեկոյան հասանք Կրուզոգոր:

Սքանչելի յե մայրամուտն Ելլրուտի լանջին:

Արևի վերջին հանդուգ ճառագայթները տակ, դա-  
շտի ստվերների նման հեռվից ձգվում են Կովկասյան

լեռները Ադիր-սու խմբից մինչև հսկա Խոյսու-Տաու:  
Գեղեցիկ և Կրուզոզորը:

Այստեղից բացվում և մի հոյակապ պանորամ դե-  
պի Կովկասյան լեռնաշղթան, նրա դադաթները, դե-  
պի անպարտելի Ուժբան, Դոնդուզ-Որուն, Դիլ-Տա-  
ուն, Տեղենեկլի-Բաշին և մյուսները:

Ձախ կողմում բացվում են Մեծ Աղաու, իսկ ա-  
ջում՝ Փոքր Աղաու սառցադաշտերը, կտրված սառցա-  
դույտերով, վորի վրայով ճանապարհը տանում և դե-  
պի 11-ի ոթեանը և դադաթները:

Դիմացը յերևում են Նլբրուսի յերկու դադաթներն,  
ալնքան մոտ և ալնքան կարոտալի:

Կրուզոզորում են թաղված հայտնի ալպինիստներ՝  
Զիլհեյմը, Ֆուքսը և Սաչա Գերմադենովը:

Ալպինիստը Կրուզոզորում վաղ և ավեր կենում ու  
դիտում և սքանչելի արեւածաղը:

## 6. ՄՈՐԵՆԻ<sup>1)</sup> ՅԵՎ ՖԻՐՆԻ<sup>2)</sup> ՎՐԱՅՈՎ

Սեպտեմբերի 16-ն և:

Մենք պատրաստվում էինք դեպի 11-ի ոթեվանը:  
Բոլոր բոպենները հաշվի յեն առնված: Լեռներում  
պահանջվում և ժամանակի խիստ հաշվառում:

Առավոտյան բարակ քամին դեռ չեր ցրել գիշերվա



Նկ. 7. Ալպինիստների խումբը Նալչեկում

1) Մորեն — քարաքարկառ, սառցադաշտային  
շրջանից:

2) Ֆիրն — սրսռածյուն, փիրուն ձյուն:

լնթացքում կիրճում հալաքված ամպերը և լեռների  
թիկունքից դեռ չեւ բարձրացել արեւը, յերբ մենք  
զուրա յեկանք Կրուզոզորից:

Այստեղ վերցրինք մեզ հետ յերկաթյա ճանկեր,  
առանց վորի հետագա վերելքն անհնարին և, սառցա-  
հատներ, ալպինչտոկներ, կապույտ ակնոցներ, պա-  
րան և այլ անհրաժեշտ իրեր:

Դանդաղ, հաշվի առնելով յուրաքանչյուր քայլ՝  
խումբը շարժվում և փոքր Ադաու սառցադաշտով:

Յուրաքանչյուրն իր մեջքի վրա տուրխտական  
պայուսակի մեջ տանում և 16—20 կիլոգրամ բեռ, իսկ  
վոտներին կապել և յերկաթյա ճանկեր:

Առաջից դնում են 3 դրաստ, մեր 2 բալկարացի  
ընկերները և տնտեսական մասի ղեկավարը հետ, վո-  
րոնք տանում են մեր 4—5 որվա համար անհրաժեշտ  
պարենը:

Մեր խմբից մեկը հիվանդացել էր և մնացել Նալ-  
չիկում:

Մեր կազմում մնացել էյին 21 հոգի: Վորքան  
բարձրանում էյինք, այնքան Նլրրուսը դառնում էր  
կարոտալի և ավելի ու ավելի մոտ էր թվում մեզ:

Քսան բոպե յե արդեն վոր մենք քայլում ենք մո-  
րենների վրայով:

—Վա՛յ, քո արիւղ մեռելը... — բացականչեց  
Սմբատը, համաձայն իր սովորության, վորին արդեն  
ընտելացել էյին բոլորը:

Մեր զիմացը կանդնած էր մի հսկա միակտոր

քար, վորը բնությունից կերտած մարդու արձան էր՝  
թեւերով, վոտներով, գլխով և այլն:

— Բնությունն առանց մարդու միջամտության  
ճարտարապետական դործերով եւ և զբաղվում, — յեղ-  
րակացրեց ընկերներից մեկը:

Այնքա՛ն մեծ և տպավորությունը և հիացմունքը,  
յուրաքանչյուր քայլավորին միշտ նոր, ավելի հետա-  
քըքըր և հոյակապ տեսարանները, այնպես վոր առանց  
զգացածն արտահայտելու, առանց տարրինակ բացա-  
կանչությունների, նույնիսկ առանց վիճաբանության  
առաջ ընթանալն անհնարին և:

Յեւ իրոք:

Նլրրուսի հրաշագեղ տեսարաններն սկսում են բաց-  
վել Կրուզոզորից սկսած, և մինչև դադաթն ավելի  
ու ավելի խառնում են տպավորությունները:


Նլրրուսի լանջերն այնքան եւ թեք չեն:

Մեր մարչրուսի վրա չկան ավելի քան 35—40 առ-  
տիճանի թեքություններ: Չկան ուղղահայաց ժայռեր  
կամ սառցյա պատեր, վորոնց վրայով պետք և բարձ-  
րանալ մագլցելով, տուցի վրա աստիճաններ վորելով  
և յուրաքանչյուրին մեկ-մեկ, պարանի ողնությամբ  
դեպի վեր բարձրացնելով:

Չկան անանցանելի սառցյա ճեղքվածքներ:

Սակայն կան վտանգավոր ճեղքվածքներ, վորոնք  
պահանջում են մեծ զգուշություն և յերկու գլխավոր  
դործոններ, վորոնք լուրջ մտանդի պատճառ կարող  
են դառնալ, վորոնք վարող են զոհեր տանել մեղնից  
ու խոչոր չափով խոչընդոտ հանդիսանալ և խանգարել

մեր վերելքը: Դրանցից առաջինը յեղանակի անսպասելի փոփոխությունն է, վորը կապված է ջերմաստիճանի ցածրության հետ, մասնավորապես սեպտեմբերամսին, իսկ յերկրորդը՝ ոգի նորություն բացասական ազդեցությունը մարդկային օրգանիզմի վրա: 51½ կիլոմետր բարձրության վրա բարոմետրը ցույց է տալիս մոտավորապես 370 միլիմետր, փոխանակ սովորական 760 միլիմետրի:



Նկ. 8. Ուժբան՝ սրածայր, յերկնալաց դաղաթներով

Ճանապարհը դնում է սկզբից՝ քարակույտների, լավային մեծ քարակտորների միջով:

Մենք չարժվում ենք, խստորեն պահպանելով լեռնային պայմաններում անհրաժեշտ բոլոր կանոնները՝ քայլում ենք դանդաղ, փոքրիկ դադարներով:

Այստեղ պետք է լավ հիշել բարձր լեռնային տուրիզմի հիմնական կանոնը՝ վոչ միայն հասնել, այլև պահպանել ուժերը, չխանգարելով սրտի գործունեությանը:

Այստեղ սրտի աշխատանքն ավելի մեծ է քան վտանքի:

Մենք քայլում եյինք մորենների վրայով դեպի վեր:

Այնտեղ, ուր վերջանում է Փոֆր Ազաու սառցադաշտը, սկսվում է սառուցների և ձյան շերտը, վորից հետո արպիներիստը վերջին հրաժեշտն է տալիս հողին ու քարին և այնուհետև մի քանի օր չարունակ հարմարվում է ձյունապատ և սառցային լանջերին ու անհուն տարածության քմահաճույքին:

Սկսվեցին սառուցները:

Յերբ մենք հերթական դադարն եյինք առնում, կապեցինք մեր վոտքերին յերկաթյա ճանկերը և դրինք ակնոցները:

Վերելքն աստիճանաբար դժվարանում էր:

Անվերջ սառցադաշտեր, վտանգավոր ճեղքվածքներ, ձյուն, վորը շատ է դժվարացնում վերելքը:

Սառցադաշտը կտրտված է բազմաթիվ ճեղքվածքներով և սառցադաշտային հորերով: Նրանցից շատերը բավական մեծ խորություն ունեն: Վորոշ տեղերում ճեղքվածները ծածկված են հաստ ձյան շերտով և վտանգավոր են:

Պետք է անցնել ճանապարհը՝ նախօրոք սառցահատով կամ արպիչտոկով ստուգելով առջևում ընկած ճեղքվածքները և կասկածելի տեղերը:

Դանդաղ ուղևորվում ենք դեպի Դարա-Բաշի ժայռերը:

Բոլորի տրամադրությունը բարձր է: Թվում է, թե բոլորի պուլսն այսօր «կարգի չե յեկել» և արդեն սկսում է ընտելանալ Ելբրուսի կլիմային:

Աստիճանաբար ընտելանում ենք չարժման ուրթմին, և դանդաղ քայլվածքի դեմ ընկերների բողոքներն ավելի նվազում են:

Նույնիսկ Հոկտեմբերյան չրջանից յեկած Սմբատը, լենինականցի Զավենը լուել են, վորոնք ճանապարհին անընդհատ բողոքում էին, վոր դանդաղ ենք քայլում:

— Ծո՛, թողեք մե երթամ Ելբրուսի դադաթն ու դամ, ե՛, — ասում եր ամեն ժամանակ Զավենը:

— Վա՛յ, տերդ մեռնի, Ելբրուս, սո՛, ես ի՞նչ ե, վոր եսքան դժվարացնում են, յես ստրա... — լրացնում եր Զավենին Սմբատը:

Արևը ծագելուց հետո շոգն սկսեց նեղել: Ծարավ ենք զգում:

Սառցադաշտի վրայով, բազմաթիվ փոքրիկ կարկաչուն զետակներ կաղմելով հոսում են արևի ճառագայթներից տաքացած ձյան և սառցի սառնորակ ջրերը:

Հաճախ սառցի ճեղքվածքներից լսվում է նրանց տակից հոսող, դեպի ո՛ւր՝ մեզ համար բոլորովին անհայտ, սառցաջրերի խուլ աղմուկը:

Ուզում նս խմել, բայց հիշում ես նախազգուշացումը, վոր խմել այդ ջրից չի թույլատրվում:

Այդ ջուրը մարդու ծարավը չի հագեցնում և դժբաղձ ազդեցություն է ունենում բերանի լորձաթանցանի վրա:

Դարա-Բաշի ժայռերի մոտ վերջին դադարն ենք առնում:

Տնտեսական մասի ղեկավարը բոլորին չոկուղե, թխվածքներ ե բաժանում, խմում ենք մեր տեղմոսների մեջ յեղած ջուրը, թեյը կամ կակաոն:

Դադարից հետո նորից վերելք է: Փոքր Ագառի սկզբից քիչ թեք մակերեսը միանգամից բարձրանում է զեղեցիկ սառցակույտով դեպի վեր, հակադասան սառցային կուտակներով, վորոնք արևի ճառագայթների տակ ներկվում են յերբեմն զմուլտի կանաչ գույնի, յերբեմն ել յերկնային կապույտ գույնի:

Ժայռերն անցնելուց հետո մեր առաջ բացվում է լայնարձակ սրսռածյունի (Ֆիրնային) դաշտը, վորն իջնում է զեղեցիկ տեղանքերով:

Ֆիրնի աչք ծակող սպիտակ մակերեսի վրա տեղ-տեղ յերևում են լավային կատարները:

16 ժամ է, ինչ մենք դուրս ենք յեկել Կրուզոզդից և քայլում ենք Ֆիրնի և մորենի վրայով:

Վերջին չրջադարձը՝ և յերեկոյան ժամը 5-ին մեր խումբը հասավ 11-ի ոթեանը: Սա մի կիսողակ է՝ կենտրոնում փոքրվածքով: Այստեղ 1907 թվին ապաստարան են դադել լավային քարաժայռերի մեջ 11 ալպինիստներ, պաշտպանվելով փոթորիկից և բքից: Այն ժամանակ այստեղ տնակ չի յեղել:

Մեզ դիմափորեցին Դոնրասի բանվորները. նրանք

մեր զալու մասին իմացել էյին զեռ ճանապարհին և մեղ համար ընթրիք ու յերեկոյան թեյ էյին պատրաստել: Ինչպիսի՞ հոգատարութիւն, ինչպիսի՞ ուշադրութիւն, լեռների և սառցադաշտերի մեջ, Գոնբասի պրոքետարների կողմից զեպի Հայաստանի մի խումբ բանվորներն ու կոլտնտեսականները: Ոթնամի բարակը կարող է տեղավորել միայն 50 հոգի: Բոլոր տեղերը զբաղված են: Վրանները խփեցինք քարերի մեջ, և ընկերները բաժանվեցին ըստ վրանների: Քնել սառուցների վրա, հատուկ պարկերի մեջ գիշերային քամիներէ դերկում, Ելբրուսի լանջին, յերբ զգում ես, վոր ահա քամին կտանի վրանը, և դու կմնաս քնելու պարկի մեջ, բնության քմահաճույքին յենթակա: Այս խոր զգացմունքը և՛ ահռելի յէ, և՛ դեղեցիկ: Յերկու գիշեր պետք է քնեյինք սառուցների վրա:

## 7. ՏԱՍՆՄԵԿԻ ՌԹԵՎԱՆՈՒՄ

(4200 մետր)

1932 թվի ամառն է կառուցվել այս փոքրիկ փայտաշեն տնակը, յերկու հսկայական քարաժայռերի մեջ, վորը հեռվից լուցկու տուփի տպավորութիւն է թողնում, վորի համար արպինիստները նրան «Լուցկու տուփ» անունն են տվել:

Տնակի շուրջը մի փոքր հարմարութիւն է ստեղծված վրանների համար: Բայց վրանների մեծ մասը խփում են սառցի վրա, վորի վրայից գցում են բրեզենտյա մի կտոր և քնում են յերկու պարկի մեջ:

11-ի ոթեվանն ամենահարմար տեղն է, բքի և

փոթորկի ժամանակ սպասելու, մինչև կկտրվի, ապա շարունակել ճանապարհը: Այստեղ կարելի յէ մնալ մի քանի օր:

Մրանից 500 մետր հեռու գտնվում է 9-ի ոթեվանը, վորտեղ տեղավորված է Ելբրուսի ողերևութաբանական կայանը:

Մտնում ենք փայտաշեն բարակը: Վորմատախտերը և բարակի պատերը զարդարված են «արտադրության դործիքներով», այստեղ վան քնելու սրահներ, յերկաթյա ճանկեր, սառցահատներ, ալպինշտոկներ, ակնոցներ, թաղիք և այլն:

Վերջապես ժամը 8 է:

Բոլորս պետք է պարտադիր կերպով պառկենք քնելու:

Գիշերը զեպի Ելբրուսի դադաթն են մեկնում Գոնբասի, Տուլայի և Գրոպնու բանվորական արպինիստական խմբերը:

Մենք մեղ վրա պարտավորութիւն ենք վերցրել գիշերը վաղ վեր կենալ, հերթապահներ նշանակել և զնացող ընկերների համար ընթրիք ու թեյ պատրաստել:

Այդպես ել արինք:

Յերեք ընկերներ վեր կացան գիշերվա ժամը 12-ին, պատրաստեցին նախաճաշը, թեյը և դռնբացիներին ճանապարհեցլն զեպի դադաթը:

Սառն ողը և բարակ քամին թափանցում են մարմնի մեջ, մի անդուրեկան սարսուռ անցնում է ամբողջ մարմնով:

Քննելու պարկի մեջ ալեկի յենք կծկվում, ամուր  
հավում միմյանց, դեմքներս անդամ ծածկում պարկի  
մեջ:

Գիշերը շատ անհանդիստ քնեցինք:

Անվերջ արթնանում ելինք և անհանդիստ լսում  
քամու շաչյունը, վորն ուժեղ թափով խփում եր  
վրաններին և թվում եր, թե ուր վար ե, հիմա  
կպոկի վրանը մեր վրայից և կգլորվենք անդունդը:

Մի քանի հոգի, ալեկի ճարպիկները, հենց ա-  
ռաջին գիշերը «ճողոպրեցին» վրաններից և տաք  
անկյուն գտան բարակում:

— Այս ի՞նչ բան ե, քամին չպե՞տք ե դադարի  
այս գիշեր, — հարցնում ե ինձ կողքիս պառկած ալ-  
պինիստ Ասատուրը:

— Չե՛, Ասատու՛ր, գիլ ե փչում, չտանի մեղ ձորը  
դցի, — պատասխանում եմ յես:

— Քամին հարավ-արևմտյան ե և վաղը լավ յեղա-  
նակ պետք ե լինի:

Բայց հանդիստ քնել չի լինում:

Անընդհատ շարժվում եմ մեկ աջ, մեկ ձախ կող-  
քիս վրա:

Համբերություն չկա այլևս սրտկած մնալու:

Դուրս եմ դալիս վրանից՝ դոնրասցիներին ճանա-  
պարհ դցելու:

Ողբ չափազանց սառն ե: Դողում ենք:

Ընկերներույ յերկար ժամանակ կանգնել ենք և  
դիտում ենք ու հիանում կովկասյան Գլխավոր լեռ-  
նաշղթայի աննման պատկերով, գիշեր ժամանակ և

մեջընդմեջ ամեն մեկին իր դիտողությունն ե անու՛մ:

Աննման ե Մինգի—Տաուն:

Այդ սպիտակ սարը կամ, ինչպես անվանում են  
տեղացիները, Մինգի—Տաուն, առիթ ե յեղել բազ-  
մաթիվ ժողովրդական առասպելների ծագման, մեկը  
ժյուաից հերոսական, մեկը մյուսից սքանչելի ու  
նույնքան ահուկի:

Ահա հսկա Բեշտաուն, վար խանդից դրդված  
թնցրել ե դուցաղուն Ելբրուսի գլուխը, կամ հսկա  
Սիմուրգ թռչունը, վորն իր թևերի շարժումով առաջ  
ե բերում Ելբրուսի ձյունապատ լանջերին բուք ու  
փոթորիկ, իսկ հետո՝ պայծառ արեգակ՝ վրա՛ պատ-  
մում են Նոյի տապանի առասպելը, այն տապանի,  
վորն առաջ Ելբրուսի դադաթին ե իջել, հետո միայն  
Աբարատի. պատմում են Զինալի և այլ վողիների  
մասին, վորոնք բնակություն են հաստատել Ելբ-  
րուսի անմատչելի (ինչպես առաջ կարծում եյին)  
դադաթին:

Այսպիսով այս հսկա սարը դարեր շարունակ  
առատ աղբյուր ե յեղել մարդկության յերևակայու-  
թյան համար, և բազմաթիվ ցեղեր ու ազգություն-  
ներ հորինել են բազմաթիվ առասպելներ, և ամեն  
մեկը նրանցից տարբեր անուն ե տվել այդ սարին:

Նա դանկելով Յեկրոպան և Ասիան միացնող  
պատմական տրակտի վրա, հայտնի յե յեղել հնա-  
դույն ժամանակներից բազմաթիվ ժողովուրդների,  
վորոնք և անվանել են նրան իրենց սեփական անուն-  
ներով:

Այսպես, չերկեսները նրան անվանել են Կուսկա-  
Մաֆ, այսինքն՝ յերջանկություն բերող սար և Աշգաս  
Մախո՝ սրբազան բարձունք:

Ելբրուսի ոռոս-աղբրեջանական անունն է՝ Զին-վա-  
դիշան, վոր նշանակում է լեռնային վոդլներէ թաղա-  
վոր, վարարդիւնցիներն անվանում են Աշխաւա-խոււա՝  
որվա սար, վրացիները—Յալբուզ՝ ձյան բաշ, պարսիկ-  
ները—Ալբրուս՝ բարձր սար կամ կուրծք, վորն ավելի  
յէ հարմարվում նրա 2 կիւր սառցյա դադաթներին:

Յուրաք սաստկանում է:

Արդեն գիշերվա ժամը 2-ն է:

Դոնբասցիները հասել են Պաստուխովի ոթեանը:  
Լսվում է հեռվից միայն նրանց վոտնաձայնը, խուշ  
Փերնային աղմուկը և ալպինշտոկների շրխիցը:

Մեր դիմաց բարակի աղոտ լույսը հագիւլ է նըշ-  
մարվում:

Մենք այնքան ենք տարվել Կովկասյան լեռնաշղ-  
թայի հմայիչ տեսարանով, վոր առանց նկատելու,  
Դոնբասի խմբի յետեից դանդաղ քայլերով, հասել  
էյինք արդեն 4500 մետր բարձունքը, Պաստուխովից  
մի քանի քայլ հեռու:

Սառցահատի ողնությամբ, զգուշությամբ լիջանք,  
մտանք քնելու տաք պարկի մեջ ու խորը քնեցինք:  
մինչև մյուս առաւոտը:

## Ց. ԳՐՈՇՈՒՍ ԵՆՔ ԵԼԲՐՈՒՍԸ

Տասնմեկի ոթեանում մենք մնացինք յերեք որ:  
Դոնբասցի ընկերները, վորոնք իրենց հետ տանում  
էին ինքնուրույն Միության առաջին մարշալ Կլիմ  
Վորոշիլովի կիսանդրին, հաջորդ օրն առաւոտյան  
սկսեցին վերադառնալ դեռ Պաստուխովի ոթեանից,  
5000 մետրից և Թամբարից: Նրանք 30 հոգի էյին:  
Հաջողվեց արեւմտյան դադաթը բարձրանալ միայն  
մեկ հոգու, վորը շուքրուդական յերկու հրահանդէշ-  
ների ողնությամբ բարձրացրել էր ընկեր Վորոշիլովի  
կիսանդրին արեւմտյան դադաթը:

Այդ հանգամանքը վոչնչով չաղղեց մեր տրա-  
մադրությունների վրա: Մեր հաստատակամությունը  
չկոտրվեց:

Մենք արդեն ընտելացել էյինք կուեկտիւ կյանքին:

Լեռնային պայմաններում այդ ավելի քան անհրա-  
ժեշտ է:

Միատեղ, մի պարանով բարձրանալը, կյանքը  
մի վրանի մեջ, փոխադարձ ողնության պահանջը,  
ընկերով կյանքի պահպանության պատասխանատու-  
թյունը—այս բոլորը ստեղծում է լեռներում ալպի-  
նիստի մեջ կուռ ընկերության զգացում, սովորեց-  
նում է կուեկտիւ կյանքի:

Հայաստանի շրջաններից հավաքված 22 երտուղի-  
առտները համակված էյին այդ կուեկտիւ զգացումով,

հաղեցված հաղարավոր փոխնոտեսականների և բան-  
վորների կամքով ու ցանկությամբ՝ հաղթահարելու  
լեռնային հիվանդությունն Եւրրուսի վրա, սառցա-  
դաշտերն ու սառցաթաշտերը, բուքն ու մառախու-  
ղը: Նրանք՝ 22 խոնդավառ ալպինիստները ձգտում  
էին այդ արշավով հավերժացնել Հայաստանի խոր-  
հրդայնացման 15-ամյակը:

**Եւրրուս:**

5633 մետր բարձրություն:

Դեպի լե՛ռը, դեպի ձյունադառ դադա՛թը: Այս  
այրով ցանկությունը մի անորինակ ուրախություն  
էր պատճառում մեզ:

Խորհրդային ազատ, յերջանիկ յերկրի նոր մարդիկ  
համառ են իրենց վերջման մեջ:

— Նպատակի պարզորոշություն, — ահա թե  
ինչն էր մեզ մղում դեպի վեր: Պրոլետարական վառ  
հայրենասիրությունը, սերը դեպի մեր սքանչելի  
խորհրդային հայրենիքը — ահա թե ինչն էր մեզ մղում  
առաջ ու անհուն վիզելորում:

Սեպտեմբերի 18-ի մի պարզ, լուսնկա գիշեր էր:

Նոր էյի փակել աչքերս, յերբ մեքենավար Գառ-  
նիկը դարթեցրեց ինձ:

Գիշերվա ժամը 12-ին մոտ էր:

Հրաման տրվեց պատրաստվելու:

Միանգամից աշխուժացավ բերնե-բերան լիքը բա-  
րակը:

Վերջին գիշերը մենք բոլորս վրաններից տեղա-  
փոխվել էյինք բարակ: Մեր հյուրերը՝ ղոնրացիները  
և մյուսներն արդեն մեկնել էյին:

Մենք վերջին խումբն էյինք Եւրրուսի ձյունա-  
պատ լանջին: Հրահանդիչներն անդամ իրենց դործն  
արդեն վերջացրել էյին և հրաժարվում էյին մեզ դե-  
պի դադաթն ուղեկցելուց:

Մենք դիմեցինք ողերևութաբանական կայանի  
վարիչ Սաշա Գոլբաչովին, վոր նույնպէս հմուտ ալ-  
պինիստ էր և բաղմաթիվ խմբեր էր առաջնորդել դե-  
պի Եւրրուսի դադաթները:

Նա պատրաստ կանգնած՝ սպասում էր մեզ:

Բոլորն չտապ հաղնվում են:

Կոչիկների մեջ հաղնում ենք 2-3 զույգ տաք  
բրդե գուլպաներ, վրայից՝ թաղիքե կամ վոչխարի  
մազոտ մորթուց կախած կրկնակոշիկներ, իսկ նրանց  
վրա կապում ենք յերկաթյա ճանկերը:

Մեզանից ամեն մեկը նման էր կաղամբի մեծ գլխի  
(այնքա՛ն վերված էյինք):

Հագել էյինք ամեն մեկու մինչև 3-4 մայկա,  
1-2 սվխտեր, 1-2 վերնաշապիկ, սլաշչ կամ կիսա-  
վերաքիտ:

Կոանալու հնարավորություն չկար:

— Ասատուր, մի ես ճանկերն ամրացրու, —  
խնդրում եմ ընկերոջս:

Նույն խնդրով դիմում են միմյանց բոլորը:

Չգիտեմ ընկերներից ով էր, հիշեց հայտնի Ծիա-  
լի-Ծառուրին:

— Տո՛, Ծիպլի՛ Ծառուր եմ դարձել, մի նայի՛ր  
ես կողմը:

Յեղանակը բարենպաստ է: Արդյո՞ք առավոտը նույնպես լավ յեղանակ կլինի: Չե՞ վոր մեր հաջողությունը կախված է յեղանակից:

Բոլորն ինչ-վոր հանդիսավոր, բարձր տրամադրություն ունեն:

18 Ժամ մենք պետք է քայլենք սառցաժայռերի, ֆիրնի և սառցի վրայով, մենք պետք է տանենք լեռնային հիվանդությունը, ոգի նոսրությունը:

Ստուգելով բոլոր ընկերների հագուստը և անհրաժեշտ պարագաները, համոզվելով վոր բոլորը տաք են հաղնված և պատրաստ են շարժվելու՝ գիշերային խալարի մեջ հնչեց վերջին մարտական հրահանգը:

— Դեպի արևմտյան դադաթը, մա-ա-ա-ր-չ:

Յեվ ամբողջ խումբը լուռ ու դանդաղ շարժվեց դեպի Պաստուխովի ոթևանը:

18 Ժամվա ընթացքում մեր ուռելիքն եր լինելու՝ յուրաքանչյուրին 3 հատ չոկոլադի կանֆետ, մի բռնաչափ քիչմիշ, 4-5 հատ դալետ, իսկ վոմանք ունեյին նաև մի քանի կտոր սոխ կամ սխտոր, վորը շատ լավ է աղդում սրտի գործունեյության վրա լեռներում, և տերմոսի մեջ, դեռ յերեկոյան պատրաստած, սուրճ կամ տաք թեյ:

Ահա մեր 18 Ժամվա սնունդը: Մեր մոտակա կայանն է լինելու Պաստուխովի ոթևանը, մի կույտ ժայռեր, Մոնքլաճի բարձրության հավասար (4800 մ):

Քայլում ենք մեջընդմեջ, յերբեմն սառցյա, յերբեմն ել ֆիրնային լանջերով:

Վերելքն այնքան ել թեք չէ:

Շարժվում ենք դանդաղ, հաշվի առնելով ճանապարհի յուրաքանչյուր մետրը 3—4 քայլվածքով:

Յուրաքանչյուր 20—30 քայլի վրա կանդ ենք առնում, շունչ քաշում և ապա շարունակում ճանապարհը:

Յուրան սկսում է սաստկանալ և թափանցել մարմնի մեջ:

Բարձրացնում եմ կիսավերարկուիս ոճիքը, ասվելի յեմ ամրացնում գլնվորական կոմունարկան դլխիս և առաջ եմ շարժվում:

Հեռվում ինչ վոր ժայռեր են յերեվում:

Բայց այդ դեռ Պաստուխովը չէ:

Սկսում է լուսանալ:

Գեղեցիկ ու հմայիչ է լուսաբացը Նլբրուսի լանջին:

Մեղնից ցած, ուղիղ մեր դիմաց, կովկասյան հսկաներն աստիճանաբար սկսում են կորցնել իրենց մոայլ տեսքը և վաղել վաղորդյան արեգակի կարմրավայլ ճառագայթների տակ:

Ահա մեզ շատ մոտ՝ Դոնդուզ-Որունի ձյուններն ու սառույցը:

Քիչ առաջ նրանք յերկնավուն-մանուշակագույն էյին:

Մի քանի վայրկյան հետո նայում ես ու չես ճանաչում, այնքան արագ նրանք փոխվում են, յերբեմն կապույտ-գործխոյա, յերբեմն՝ կապույտ,

յերբեմն մուգ — վարդազույն, յերբեմն ել՝ գունատ-  
դեղին գույների, և այսպէս շարունակ:

Բացվում են նորանոր տեսարաններ դեպի մեզ ան-  
ծանոթ բազմաթիւ լեռները, դադաթները, նորանոր  
լեռնաշղթաները:

Արեւը դեռ ևս չի յերևում:

Կանգ ենք առնում 5 բոպե և դիտեմ ենք արեւա-  
ծաղի հրաշագեղ տեսարանը:

Մի քանիսը փորձ են անում բարձրաձայն խոսել  
և զանազան դատողություններ անել արեւածաղի մա-  
սին, սակայն կարգադրվում և նրանց լռել:

Խոսակցությունն այստեղ ենեղբայրի ավելորդ  
վատնում է, վորն այնքան անհրաժեշտ է դադաթին  
տիրելու համար: Այստեղ պահանջվում է ուժերի  
խտադուլն սրահպանում:

Բոլորի ուշադրությունը կենտրոնացած էր արեւա-  
ծաղի վրա:

— Նայե՛ցեք, նայեցե՛ք, — բացականչում են մի  
քանիսը, — տեսե՛ք՝ ինչքա՛ն դեղեցիկ է արեւածաղը,  
հալերժական ձյունները սիւղապանձ դադաթներին փայլ-  
փլիլն են տալիս հազարավոր յերանդներով: Ահա,  
հեռվում պայծառացել է հոյակապ ԿՈՇՏԱՆ-ՏԱՌԻՆ:

— Նայեցե՛ք, ի՞նչ է այս:

Յերկնակամարն՝ ավելի խավար, արեւմտյան  
կողմում կտրվում է մի մուգ յապուշտ շերտով: Դա  
Եւրբուսի սովերն է: Գլխավոր լեռնաշղթայի յետե-  
վում յերևում է մի հսկայական ձյունն սրտի շարան-  
դրանք Սփանեթիայի լեռներն են, իսկ նրանց յետե-

վում՝ մառախուղի մեջ խորասուզված են Փոքր Կով-  
կասի լեռնաշարքերը:

Այնքան և լուսացել, վոր արդեն անհրաժեշտ է  
ակնոցները դնել, այլապէս անհնար է քայլել:

Վերջապէս հասանք Պաստուխովի ոթեանը:

Այստեղ, լավային քարաժայռերի մեջ, 1890  
թվին դաժան ձյան վոթորկի դեմ ապաստարան և  
գտել Կովկասի հայտնի հետազոտող, ոսկմական յո-  
պոգրաֆ Պաստուխովը, առաջին ուսա ակպինիստը,  
վորը բարձրացել է Եւրբուսի դադաթը:

Սկսվում է տաք խոսակցություն վերելքի ա-  
ռաջին տպավորությունների մասին: Միքանիսն  
ոտուղում են իրենց յերկաթյա ճանկերը, մի քա-  
նիսը նախաճաշում են, վոմանք ել լուս նստած քարե-  
րի վրա՝ հանգստանում են:

Այստեղ 10 բոպե հանգստանալուց հետո մենք  
չարժվեցինք դեպի Թամբարդ<sup>1)</sup>:

Ողի նոսրությունը սեղմում է կոկորդը, սկսվում  
է գլխացավը, իսկ վոմանց սիրտն է սկսում խառնել:  
Լեռնային հիվանդությունը մուտք և գործում մեր  
չարքերը: Շարժման տեմպն ե՛լ ավելի յենք դանդա-  
ղեցնում: Այլևի հաճախակի յենք դադար առնում:

Աստիճանաբար ողի ճնշումը նվազում է, շնչա-  
ռությունը ծանրանում է, իսկ վերելքը, Պաստուխո-  
վի ոթեանից հետո, ավելի թեք է դառնում: Իսկ մեր

1) Թամբարդը յերկու դադաթների միջև ընկած  
հարթություն է (5230 մ.):

ալպինիստական յերկարածիզ սյուներ համառութեամբ ձգվում է անընդհատ դեպի վեր:

Լեռնային ողի սառնությունն ավելի զգալի յե դառնում:

Հովտեմբերյան չրջանի կոլտնտեսական Մովսեսը, մեքենավար Գառնիկը, կատակախոս Սմբատը քայլում են հանդիստ, կարծես լեռնային ողը նրանց վրա վատ չի ազդում, իսկ մի ուրիշը քայլում է ալպինշտոկն ուսին՝ հովվի մահակի նման:

Յերեւանի «Արարատ» գործարանի բանվորուհի Փայլունը, վոր միակ կինն էր մեր արշավախմբի մեջ, քայլում է բոլորին հալասար, հանդիստ:

Նա քայլում էր չարքի առաջից և ցույց տվեց բնության տարերքը հաղթահարելու կամք և մեծ սու-կունություն, չնայած այն հանդամանքին, վոր նա վերադարձավ թամբարդից:

Այդ ևս համարվում է ալպինիստական բարձր նոր-մա, վորը մեր խմբի մասնակից միակ կնոջ համար վայրուն հաղթանակ էր:

Առավոտյան ժամը 11-ին մեր խումբը հասավ թամբարդ:

Զգում ենք, վոր զարկերակն արդեն դուրս է դա-լիս նորմալ հունից, լեռնային հիվանդությունն զգալ տվեց իրեն: Սկսվեց արյունահոսությունը քթից, բե-րանից, և ուժեղ գլխացավը:

Նա, ով սկզբում ցանկություն էր հայտնում վա-

ղելով հասնել դադար, այժմ թուլացած ընկել է տը-նակի կտուրի վրա, սիրտը խառնում է և ստիպված պետք է վերադառնա թամբարդից:

Այդպես դաժան է ու անողորմ ելբրուար:

Բոլորը դռնատվել են և բոլորի դեմքերի վրա հոգնածության կնիք է դրոշմված:

Մենք կանգնած ենք ավելի բարձր, քան այնպիսի լեռնային հսկաներ, ինչպես, որինակ, Դիլս-Տաուն և Կոշտան-Տաուն, - նույնիսկ Մոն-բլանը:

Մենք հպարտ ենք, վորովհետեւ կանդնած ենք հաղթանակի սահմանագծում:

Մնում է ընդամենը 313 մետր վերելք, և մենք կլինենք ելբրուարի ամենաբարձր դադարին:

Այս հաղթանակն ել մեզ վուգեվորում է, վոր մեր արշավախումբը պատկանում է այն փոքրաթիվ խմբե-րի թվին, վորոնց հաջողվում է 100 տոկոսով հասնել թամբարդը:

Այդ նախնական հաղթանակը մեզ ավելի յեր վո-գեորում: Այստեղ մեր չարքերն սկսեցին նորոհնալ, վերադարձան 4 հոգի:

Ավելորդ իրերից թեթևանալուց հետո, նորից մեր յերկար չարքերը ձգվում են դեպի վեր, դեպի արե-մոտյան դադարը:

Հիվանդացողներից մի քանիսը փորձ են անում վերջին ուժերը գործադրել, չարքից յետ չմնալու հա-մար:

Բայց իզուր:

5450 մետր բարձրունքից դարձյալ վերադարձան 7 հոգի:

Մինչև արևմտյան դադաթը մեր շարքերում մնացել էին 8 հոգի:

Փորձված արվեստիստ Սաշա Գոբբաչովը մեզ ուղեկցում էր դանդաղ, համաչափ քայլերով:

Մենք քայլում էինք փխրուն, մի քիչ հալված ձյան վրայով, ապա թեք սառցապատ լանջով, յերբեմն ել անկանոն թափված քարերի վրայով, վորոնց արանքում են մնում հաճախ մեր յերկաթյա ճանկերի մեխերը:

Սնվերը սահում ենք ու թվում է, թե ահա վայր կըլուրվենք և ջարդ ու փշուր կլինենք:

Վերելքը մի քանի բլուրների վրայով է տեղի ունենում, և նրանցից յուրաքանչյուրը դադաթի տեղ ենք ընդունում: Բայց ցերբ հասնում ենք այդ կետին, հիասթափվում ենք: Հեռվում մեր դիմաց բարձրանում է մի նոր դադաթ, ավելի թեք լանջով, և նորից սկսում ենք մաղվել դեպի վեր:

Վերջին 313 մետրն ավելի մեծ գեղարություններով հաղթահարեցինք, քան ամբողջ ուղին մինչև Թամբարդը:

Սյնտեղ, փոքտեղ սկսվում էր մեծ թեքություն յերկրը, անհրաժեշտ էր լինում գործադրել սառցահատները, ամուր հենվել արվինշտոկների վրա և կապվել պարանով:

Սառցի վրա տատիճաններ փորելով՝ առաջից գնում էր Գոբբաչովը, իսկ նրա յետևից լուռ քայլում

էինք մենք, թաղցնելով մեր մեջ այն խոր ցանկությունը, վոր ահա մի քանի բոպե հետո վերջապես կլինենք դադաթին:

Իսկ դադաթը հեռու յի:

Յե՞րբ կհասնենք:

Ի՞նչ կլինի մեր առջև ընկած բարձունքի յետեվում:

Արդյո՞ք նորից բարձունք:

Մի շրջադարձ ևս և անցնելով յերկու ձյունապատ բարձրանքների միջև ընկած ֆիրնային դաշտի վրայով՝ բարձրանում ենք մեր առջև ընկած սրածայր դադաթը: Նրա վրա յերևում է յեռանկյունաչափական մի կետ:

Մի՞թե դադաթն է այդ:

Վոտներն այլևս չեն շարժվում, պետք է առաջ դնալ կամքի ուժով:

Մենք ուրախ ենք, մի քանի բոպե ևս, և մենք կլինենք դադաթին՝ 5633 մետր բարձրության վրա:

Կառուցուկչինի մեքենավար Գառնիկը, Հոկտեմբերյան շրջանի կոլտնտեսական Մովսեսն առաջինն են բարձրանում դադաթը և ձայն տալիս մեզ՝ յետ մնացողներին:

Նրանք փարվում են Կլիմ Վորոչիլովի կիսանդրուն, յերգում են ու պարում:

Հաղթական «ուռա»-ն և տուրխտական ուրախ յերգըն արձագանդում են Յեվրոսյայի ամենաբարձր կետի վրա: Կովկասի ձյունապատ հսկան խոնարհել է իբր զլուխը մեր վոտների տակ:

Յեղանակը պարզ է, տրեւային:

Ելբրուսի վրա, յերբ անխուսափելի յե բուժն Եւ  
Մատախուլը և սեպտեմբեր ամսին հատուկ անձրևները՝  
չկան:

Սեպտեմբերի 19-ն է:

Յերեկվա ժամը 2-ին արշավի մասնակիցներէց  
8 հոգի Ելբրուսի գազաթին ենք:

Ընկերներն չտալ հանում են թուղթն ու մատիտը,  
գրում են գազաթ թարձրացողների անուն-ազգանուն-  
ները, դնում են տերմոսի մեջ և հորում գազաթին:

Դիտում ենք շրջապատը:

Այստեղից բացվում է մի հոյակապ տեսարան դե-  
պի Կովկասյան լեռնաշղթան, դեպի Ուժբան իր յեր-  
կու սրածայր գագաթներով, իսկ նրա կողքին՝ Չաթին-  
Տաուն, ահեղ ու դաժան Կոչտան-Տաուի լեռները և  
հսկա Դիխ-Տաուն: Հաղարավոր լեռնադաղաթները  
բազմաթիվ ձևերով ձգվում են դեպի արևելք և այդ  
բոլորը փայլում է արևի պայծառ ճառագայթների  
ռախ: Հեռվում հաղարավոր լեռների մեջ յերևում է  
Կադրէկը, ապա Սև ծովը, հեռու մշուշի մեջ կորած  
Արարատը և այլ բազմաթիվ լեռներ:

## 9. ՎԵՐՁԻՆ ՅԵՎ ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ՈՒՂԻՆ

Սկսում է ցրտել:

Ելբրուսի հատուկ բարակ ու սառը քամին մտնում  
է մարդու մարմնի մեջ:

Վերջին անգամ մի հայացք ձգելով դեպի հոյա-

կապ, անմոռանալի վեներոնական Կովկասի լեռները,  
մենք սկսում ենք վայրելքը:

Դեպի Թամբարդը տանող տարածությունը, վո-  
րը վերելքի ժամանակ մենք հաղթահարեցինք ուժերի  
դերազանց լարումով և մեծ համառությամբ, անցանք  
ամենակարճ ժամանակամիջոցում, 2—3 ժամվա ըն-  
կացքում:

Բայց չնայած դրան, վայրելքը մի քանի անգամ  
ավելի դժվար է վերելքից:

Մենք ամուր հենվում ենք սառցահատների և ալ-  
պյան գավաղանների վրա, յերկաթյա ճանկերը մե-  
խում սառույցների մեջ, իսկ յերբեմն ել սահելով սառ-  
ցի վրայով՝ իջնում ենք Թամբարդը:

Արևը կամաց-կամաց թաքնվում է Ելբրուսի թի-  
կունքում, ողն ավելի սառն է դառնում, իսկ վտտները  
հրաժարվում են յենթարկվել: Չգում ենք վերելքի և  
վայրելքի հոգնեցուցիչ ազդեցությունը: Քունքերը  
ծանր թարձրանում են և իջնում: Մեկները ծալվում են:

Սառցապատ թեք լանջերի վրա, վորոշ տեղերում,  
դահանջվում է մեծ զուռլություն, այդ պատճառով  
մենք յերբեմն դանդաղ ենք շարժվում, նախազգուշաց-  
նում միմյանց, կանդ առնում և ապա նորից շարու-  
նակում ենք ճանապարհը:

Ահա այստեղ, սրանից մի քանի տարի առաջ,  
վախճանվել է հայտնի ալպինիստ ավստրիացի Ֆուխը,  
վորը գլորվել է ներքև 11½ կմ տարածություն:

Վերջին շրջադարձը, — և ահա հեռվում յերևում

և ուղիղ մեք զխմացը, ժայռերի մեջ «Լուցկու տուփ»-ը՝ 11 ոթեանը:

18 ժամ ձյունների և սառուցների վրայով քայլելը և ուղի նոսրությունն արդեն վերջնականապես հաղթահարել էյին մեզ:

Պատուխովի ոթեանի մոտ շենք կատարեցինք վերջին հանդիստը:

Յերեկոյան ժամը 7-ին դանդաղ քայլերով մենք հասանք 11-ի ոթեանը:

Հաղիվ էյինք տեղ հասել, յերբ մի քանի բուսկում բոլորը մտան քնելու պարկերի մեջ և քաղցր խոսիւնքին:

Մի քանիսը, վորոնք մեզինց չուտ էյին իջել կամ թամբարդից էյին վերադարձել, զբաղված էյին զրուցելով և պատմում էյին իրենց տպավորությունների մասին:

Մի քանիսն էլ ամիստում էյին, վոր մեզ հետ մինչև գաղաթը չբարձրացան: Նրանք պատճառաբանում էյին, վոր յեթե ղեկավարը նրանց թույլատրեր, ապա նրանք անպայման մյուսների հետ կբարձրանային գաղաթը:

Գիշերն անցավ չափազանց հանդիստ:

Մեր խմբի միակ էյին մասնակիցը, ընկեր Փայլունը, վորի վրա բայական ծանր եր անդրադարձել լեռնային հիվանդությունը, սկսեց կամաց—կամաց կազդուրվել:

Առավոտյան ժամը 8-ն է:

Նորից սկսում է աշխուժանալ տուրխտակա՞ն ճամբարը:

Պարզ, արևային առավոտ է:

Բոլորը պատրաստում են իրենց պայուսակները, կապում մեջքներին և մի ինչ-վոր արտասովոր աշխուժություն և նկատվում բոլորի դեմքերին:

Մենք դուրս ենք գալիս 11-ի ոթեանից դեպի Կրուզոգոր:

Նորից անկողնի փրնային դաշտերը, նորից Գարաբաշի ժայռերի կույտը, Փռք Ազատ սառցադաշտը:

Վերջին անգամ Ազատ հովտից նայեցինք արևհեր Նլրբուսին, մի անգամ էլ զգացինք նրա մոռյությունը և ահնջությունը, տեսանք, թե ինչպես ահարկու յե և հզոր հռչակավոր Մինգի-Տաուն:

Նայեցինք ու մեզ զգացինք հաղթողի դերում:

Բոլորովին անսպասելի մոտենում ենք Կրուզո-Այստեղից մեր վերջին ուղին տանելու յե մեզ դե-

:զյմսի

պի Նալչիկ և ապա դեպի մեր արևոտ յերկիրը:

Նլրբուսի մարչրուտն ավարտվում է: Մենք վերջին խումբն ենք, վոր իջնում ենք նրա գաղաթից:

Լեռնային հիվանդությունն աստիճանաբար սկսում է անցնել:

Մենք վերջին հրաժեկան ենք տալիս ձյունապատ լանջերին:

Մնաք բարով, Նլրբուս:

Այսուհետև մենք ավելի շատ հնարավորություն կունենանք քո ձյունապատ գաղաթին լինելու, քո Փր-նային դաշտերի և մորենների վրայով քայլելու:

11-ի ոթեանի վարիչը՝ ընկ. Պոնոմարյովը վաղուց արդեն հեռախոսով հայտնել էր. — «Իջնում են Հայաստանի ալպինիստները, դիմավորեցե՛ք»:

Այդպես են դիմավորում Ելբրուսում նրանց, ուր քեր հաղթահարում են արծախիտ դադաթներէից վորեւէ մեկը: Մենք իջնում եյինք:

Մեր իջնելու մասին ընկ. Պոնոմարյովից անդէկուծյուն ստանալուն պես Տեգեմեկի ճամբարում հաւաքվել էին բազմաթիւ ալպինիստներ, տուրիստներ, հրահանգիչներ, կոնսուլտանտներ և այլ հետաքրքրվող բազմութիւն:

Նրանց անհանդիստ հետադիտակները հետախուզում էին յուրաքանչուր լեռնային կիրճն ու դադաթը:

Մենք իջնում ենք:

Կոնսուլտանտ Պոկրովսկայան առաջինն իր հեռադիտակի ապակու վրա առաւ մեկ, և մենք նկատում էյինք, թէ ինչպես նա թափահարում էր ձեռքի թաշկինակը և ինչ-վոր ազաղակում: Մենք անցնում ենք սոճիների անտառը և ահա մեզ ծանոթ մարդկանց շրջանում ենք:

— Վողջույն Ելբրուսի դադաթը հաղթահարողներին, — առաջինը բացականչեց Պոկրովսկայան:

— Բարե՛, ընկերներ, — գոչում մենք մենք: Ապա մոտենում է մեկը մեր ղեկավարին և ալպիական տրամիցիան սրահալանելով՝ հարցնում.

— Լեռնային արծի՛ւ, հասա՞ր դադաթը:

Յե՛ւ սրան վորպէս պատասխան, սոճիների ու ժայռերի մեջ արձագանգեց ամբողջ խմբի «ու ո ո ա՛» բացականչութիւնը:

Սեպտեմբերի 20 է:

Մարդ յերբեմն տարորինակ զգացմունքներ և ունենում: Այդպես էր և այդ օրը:

Զգացե՛լ էք յերբեւ այն անսխալութիւնի հաճույքը, վոր մարդ զգում է, յերբ հորդ անձրեւի ժամանակ պատըմում է յերկնքի մի մասը և յերևում է ծիածանը: Բնության անսխալութիւնի զեղեցիկութիւններից մեկն է այդ: Ծիւտ այդպէս է նաև մարդկային հոգին: Հաղթահարել ենք Ելբրուսը, ծիածան է մեր հոգում: Հեռանում ենք Կարարդինո—Բալկարյան հրաշալի յերկրից, իջնում ենք Ելբրուսից, և աչնան մանրահատիչ անձրեւի նման ճնշող մի զրացմունք տիրում է մեզ: Յե՛ւ ուրախ ենք, և՛ տիրուր: Յե՛ւ ծիածան է, և՛ անձրեւ: Դժվար է բաժանվել Կարարդինո—Բալկարիայից: Չնայած դրան, կապում ենք իրերը և իջնում Նալչիկ:

Մենք վերադառնում ենք:

— Մնաց բարե, Նալչի՛կ, հրաժեշտ և ձեզ, հեռադիտ լեռներ, և ձեզ, Կարարդինո—Բալկարական հրաշալի գոտաններ: Մնաք բարե, սիրելի՛ Կալմիկով Բետալ, և դու, դյութական սլիքել:

Ահա նորից Բաքսանի կիրճը... թերեք զեղանկար պիերը... ժշուշի մեջ ձգվող Կովկասյան լեռների պատը... կայարաններ ու սրարչաւ փախող խճուղիներ:



Սեպտեմբերի 27-ն է, յերեկոյան ժամը 5-ը:

Մեր գնացքը դանդաղ մոտենում է Յերեանի կառա-  
մատույցին: Գնացքի պատուհաններէց յերևում են մեր  
ընկերները, բարեկամներն ու հարազատները. բոլորն  
էլ ծաղկեփնջերով ու բարձր տրամադրութեամբ յեկել  
են մեզ դիմաւորելու: Շողեքարչի անիվները կատարում  
են վերջին պտույտները: Հնչում է փողային յերաժըշ-  
տախումբը:

Լեռնային արեւից ու ձյունադառ դադաթների քա-  
միներէից ծեծված բրոնզե դեմքերով, մենք իջնում ենք  
գնացքից:

# ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                     |    |
|-------------------------------------|----|
| Կովկասի ձյունադառ հսկան . . . . .   | 5  |
| Ուղեորութիւն . . . . .              | 13 |
| Անտառանալի հանդիպում . . . . .      | 14 |
| Բաբոանի կերճը . . . . .             | 22 |
| Սոճիների և ժայռերի մեջ . . . . .    | 27 |
| Դեպի Կրուզոզոր . . . . .            | 31 |
| Մորենի և ֆիրնի վրայով . . . . .     | 36 |
| Տասնմեկի ոթեմանում . . . . .        | 44 |
| Գրոհում ենք Նիրբուսը . . . . .      | 49 |
| Վերջին և անմոռանալի ուղին . . . . . | 60 |
| Վերադարձ . . . . .                  | 64 |

Պատ. խմբագիր՝ Գ. Ղազարյան  
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռիսյան  
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Շահբազյան



Գլավիտի լիազոր Ղ—3618 Հրատ. 4431  
Պատվեր 68. Տիրաժ 1500  
Թուղթ 72×105. Տպադր. 4¼ մամ.  
Մեկ մամ. 22,400 նիշ. Հեղ. 2,15 մամ.  
Հանձնված է արտադրության 17 հունվարի 1938 թ.  
Ստորագրված է տպագրության 25 մայիսի 1938 թ.

---

ՊԵՏՀՐԱՏԻ I ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ 65

10170

Баграм Дарьян  
**ПОХОД НА ЭЛЬБРУС**  
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.